ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության
հասարակական խորհրդի կազմ ընդգրկվելու համար

Հարգելի՛ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ներկայացուցիչներ,

«ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ն դիմում է ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայության հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար՝ վստահ լինելով, որ իր մասնագիտական փորձառությունը և ոլորտում ունեցած փորձը կարող են զգալի օգուտ բերել խորհրդի գործունեությանը:

Մեր գրասենյակն ավելի քան 10 տարի զբաղվում է միգրացիոն իրավունքի ոլորտում ծառայություններ մատուցելով և այս ընթացքում օտարերկրացիների շահերի պաշտպանության ոլորտում մեծ փորձ է կուտակել: Մեր թիմը, որը բաղկացած է 11 մասնագիտացած իրավաբաններից, աջակցել է բազմաթիվ հայազգի և օտարազգի հաճախորդների՝ կացության կարգավիճակ կամ քաղաքացիություն ստանալու գործընթացներում: Այդ տարիների ընթացքում մենք համագործակցել ենք տարբեր գերատեսչությունների հետ և ներկայացրել մեր հաճախորդների շահերը նաև դատարաններում, ինչը մեզ թույլ է տվել ոչ միայն տիրապետել ոլորտային կարգավորումներին, այլև հասկանալ դրանց կիրառման պրակտիկան:

**Մեր փորձառությունն ու առավելությունները**

1. **Օտարերկրացիների խնդիրների խորքային ընկալում**: Մենք գիտենք, թե ինչպիսի դժվարությունների են բախվում օտարերկրացիները՝ կացության կարգավիճակ կամ քաղաքացիություն ձեռք բերելու ճանապարհին:

2. **Միջազգային փորձի համեմատական վերլուծություն**: Մեր գրասենյակը տարիների ընթացքում հաստատել է կապեր աշխարհի տարբեր երկրներում գործող միգրացիոն մասնագետների հետ: Այս համատեքստում մենք մշտապես ուսումնասիրում ենք միջազգային լավագույն փորձը և միգրացիոն օրենսդրության զարգացման միտումները: Կարող ենք արդյունավետորեն համեմատել Հայաստանի օրենսդրությունը այլ երկրների հետ՝ առաջարկելով պրակտիկ լուծումներ և բարեփոխումներ, որոնք կհամապատասխանեն միջազգային ստանդարտներին:

3. **Աշխատանք պետական գերատեսչությունների լայն շրջանակի հետ**
Մեր փորձառությունը ընդգրկում է ոչ միայն Միգրացիայի ծառայության հետ համագործակցությունը, այլև մի շարք այլ պետական և ոչ պետական մարմինների հետ աշխատանքը, որոնք ներգրավված են միգրացիոն գործընթացներում, մասնավորապես՝

- ՀՀ Արտաքին գործերի նախարարություն
- Պետական եկամուտների կոմիտե
- Պաշտպանության նախարարություն
- Քաղաքացիական ակտերի գրանցման գործակալություն
- Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
- Ֆինանսների նախարարություն
- Առողջապահության նախարարություն
- Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

- Ազգային անվտանգության ծառայություն
- Ճանապարհային ոստիկանություն

Այս գերատեսչությունների հետ աշխատանքը մեզ թույլ է տալիս ամբողջական պատկերացում կազմել միգրացիոն գործընթացների կառուցվածքի և խնդիրների վերաբերյալ:

4. **Մասնակցություն ոլորտում կատարվող փոփոխություններին:** Վերջին 10 տարիներին մենք հետևել ենք միգրացիոն ոլորտում կատարվող օրենսդրական և վարչական փոփոխություններին: Մեր թիմը նաև ներկայացրել է առաջարկություններ միգրացիոն քաղաքականության բարելավման ուղղությամբ, ինչը վկայում է մեր՝ ոլորտի զարգացմանը նպաստելու պատրաստակամության մասին՝ նպաստելու ոլորտի զարգացմանը:

5. **Հանրօգուտ աշխատանք:** Մեր գրասենյակի փորձն ու գիտելիքները ցանկանում ենք օգտագործել հանրօգուտ նպատակների համար: Մենք պատրաստ ենք ներկայացնել այն օտարերկրացիների ձայնը, ովքեր այլ կերպ չեն կարողանում բարձրաձայնել իրենց խնդիրները: Խորհրդի կազմում աշխատելով՝ մենք կարող ենք ապահովել, որ նրանց մտահոգությունները լսելի լինեն:

6. **Ժամանակի և ռեսուրսների առկայություն:** Մեր գրասենյակն ունի բավարար ռեսուրսներ և ժամանակ՝ իր մասնագիտական գործունեությանը զուգահեռ Հասարակական խորհրդում արդյունավետ մասնակցություն ապահովելու համար:

**Ի՞նչ կարող ենք առաջարկել Խորհրդին**

- Օտարերկրացիներին հուզող խնդիրների ներկայացում՝ գործնական փորձառության հիման վրա:
- Միջազգային լավագույն փորձի կիրառման համար առաջարկությունների ներկայացում:
- Միգրացիոն օրենսդրության բարելավման ուղղությամբ պրակտիկ առաջարկներ՝ հիմնված տեղական և միջազգային փորձի վրա:

Հավատացած ենք, որ մեր ներգրավումը Հասարակական խորհրդում կնպաստի միգրացիոն քաղաքականության զարգացմանը, ինչպես նաև օտարերկրացիների իրավունքների և շահերի պաշտպանությանը:

Հարգանքով՝